13.620

311
L-60

19668
311
Ա-60
2 304-10
370
2280-Վ.Ի
Ա-ղ

ԳԻՒՂԱՏՆՏ. ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՏՔԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

№ 2 ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀ. ՎԻՃԱԿԱԳՐ.
ԳԼԽԱՒՈՐ ԲԱԺԱՆՄ. ՀՐԱՏԱՐԱԿ. № 2

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԻՒԼԵՏԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1919-1920 Թ.Թ.

[redacted]

ՀԱՅԿ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Երևան
Էլէքտրօ-տպարան „ՈՒՐԱՐԴԻԱ“
1920 թ.

Z-24 12 AUG 2013
13620
(6603-70)
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Հայ.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(1549-2002)

25 SEP 2006

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Ինչպէս ամէն մի ստեղծագործական-կուլտուրական աշխատանք, այնպէս էլ պետական վիճակագրութեան գործը Հայաստանում հիմք է առել և առաջ է ընթանում ամենադժուար պայմաններում։ Այնքան անբաստ են մեր երկրի օբեկտիւ պայմանները, որ պետական վիճակագրութեան զըլխաւոր բաժանմունքը շատ յաճախ կանգ է առնում անդոր ու անճարակ՝ անհաղթելի խոչընդոտների առաջ։ Դժուարութիւններ յարուցուում են մեր առաջ ոչ միայն գիւղատնտեսական կամ առհասարակ գաւառական վիճակագրութեան կազմակերպութեան և գործնական կիրառման գործում,—որ նախաձեռնուում և առաջ է տարուում բացառապէս գլխաւոր բաժանմունքի ոյժերով ու ջանքերով,—այլև պետական ստատիստիկայի բոլոր Ռացած ընագաւառներում, ուր նիւթեր ժողովելու և բաժանմունքիս մէջ կենտրոնացնելու սկզբնական աղբիւրները հանդիսանում են մեր բոլոր մինիստրութիւնները՝ լրանց ստորադաս օրգաններով, և հասարակական, ինքնավարական, համայնական—կոլիգիալ այլ և այլ հաստատութիւններ։ Ի հարկէ, ամէն մի դժուարութիւն ունի իր բացատրութիւնը, և երբ դժուարութեան հիմքում գործում է ոչ թէ մարդ անհատի կամ հաւաքական խմբակցութեան սուբիեկտիւ չարակամութիւնը, այլ գերազանցօրէն դեր է խաղում տեսալ իրերի ու յարաբերութիւնների դժնդակ դասաւորութիւնը մեր երկրում, այդ դէպքում աւելորդ է զարմանալ ու տրտնջալ, այլ միայն պէտք է հասկանալ ու մաքառել օբեկտիւ դժնդակութեան դէմ։

Վիճակագրական գործի կազմակերպման և նիւթերի ժողովման կամ թւահաւաքման խոչընդոտներն են եղել պատճառ, որ բաժանմունքս հնարաւորութիւն չի ունեցել աւելի վաղ հրատարակութեան տալ իր մշակած նիւթերը՝ տնտեսական, սոցիալական և պետական կարևորագոյն երևոյթների ու հարցերի վերաբերեալ։ Ի հարկէ, վերջին տեղը չի բռնում այն խոչընդոտը, որ վերաբերում է տպագրական գործին—ամենից շատ գանգատների արժանին մեր մայրաքաղաքում,—առաւել այնպիսի պատասխանատու աշխատանքների համար, ինչպէս են վիճակագրական բարդ աղիւսակները։

Այժմ բաժանմունքս ի վիճակի է հերթական կարգով հրատարակութեան տալու մի շարք անհրաժեշտ նիւթեր։ Բաժանմունքիս առաջին մեծ գործը՝ 1919 թ. գիւղատնտեսական վիճակագրութեան մշակած արդիւնքները, արդէն տպագրուում են այժմ առանձին։ Այսօր լոյս ենք ընծայում վիճակագրական բիւլետենի ձևով Հայաստանի ապրանքափոխանակութեան վերաբերեալ տուեալները, որոնք ընդգրկում են մի տարեայ շրջան՝ 1919 թ. մարտից մինչև 1920 թ. մարտ ամիսը։

Պետ. ընդհ. վիճակագր. գլխ. բաժանմունքի կառավարիչ՝

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Հայ.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1966

Ապրանքների արտահանության վերաբերեալ այս I աղիւսակը չափազանց պարզ ու դիւրաժաչելի է իր տեսլներով, որպէսզի հարկ լինի երկար բացատրութիւնների։ Բերուած երեք հիմնական կատեգորիաներից ամենամեծ գումարի՝ արտահանուել է Հայաստանից, ինչպէս և պէտք է սպասէր, խմիչքեղէն, այն է 15.282.615 ռուբլու (54.372 վեդրո) կամ ապրանքների երեք կատեգորիաների ընդհանուր գումարի 63.3 տոկոս։ Այնուհետև յաջորդում է կաշեղէնը (11.821 փութ) 9.062.600 ր. կամ 32,3 տոկոս և վերջում զանազան տեսակի ապրանքները (աղ, չոր խոտ և այլն՝) 3.707.990 ր. կամ 4,4 տոկոս։ Արտահանության համեմատաբար ամենամեծ մասը, կաշեղէնից, ընկնում է վերջին շրջանի (1919 թ. դեկտ. 15—1920 թ. մարտի 1) վրա այն է՝ 5.291 փ. 8.227.000 ռուբլով, խմիչքեղէնից՝ միջին շրջանի վրա (1919 թ. մայիսից մինչև դեկտ. 15)-ը, այն է՝ 40691 վեդրո 8.331.482 ռուբ., իսկ զանազան տեսակ ապրանքներից, դարձեալ վերջին շրջանում արտահանուել է 36.080 փ. 3.087.390 ռուբլով։ Ամբողջ տարեշրջանի ընթացքում վերոյիշեալ ապրանքներից արտահանուել է, ըստ ապրանքափոխանակութեան կոմիտէի տեսլների 28.053.205 ռուբլու արժէքով։ Անշուշտ, այստեղ խօսք չկայ բաժակի արտահանության մասին—մեր երկրի ընդհանուր արտահանության ամենակարևոր նիւթի մասին։ Բաժակի վերաբերեալ տեսլների մասին կըխօսւի առանձին տեղ։

Վերոյիշեալ տեսլների մէջ աչքի են ընկնում փութերի արժէքների տարբերութիւնները, որոնք պէտք է վերյիշեն այստեղ իրանց բացատրութեամբ։ 1919 թ. մարտից—ապրիլ արտահանուած պատրաստի կաշեղէնի փութը արժէր միջին թւով 355 ռ., մայիսից—դեկտեմբեր արտահանուած հում կաշեղէնի փութը արժէր 39 ռ., ընդհակառակը, դեկտ. 15-ից մինչև 1920 թ մարտի 1-ը արտահանուած դարձեալ պատրաստի կաշեղէնի փութը արժէր 1554 ռ., որով վերջինս աճել է մի տարուայ ընթացքում մօտ 338 տոկոսով։ Խմիչքների մէջ նկատւում է վեդրոների գների նւազում. սկզբի շրջանում խմիչքի վեդրօն արժէր 625 ռ., յետոյ 205 ռ. և վերջին շրջանում 501 ռ.։ Առաջին հայեացքից խիստ տարօրինակ է թւում այդ նւազումը։ Բայց փաստօրէն այդպէս չէ։ Առաջին շրջանում (մարտ—ապրիլ ամիսներին) արտահանուած խմիչքները եղել են միմիայն կոնեակ և սպիրտ, որ աւելի թանկ պիտի գնահատւէին, իսկ յաջորդ արտահանութիւնը եղել է ժեծագոյն մասով գինի ու քացախ, իրանց գներով անհամեմատ աւելի արժան, քան կոնեակն ու սպիրտը։

Յաջորդ աղիւսակում մենք կցանրանքների արտահանությունը ըստ կանայինք ներկայացնել նոյն ապրանքափոխանակութեան եղանակի։

(ՏԵՍ ԱՂԻՒԱԿ ՅԱՋՈՐԴ ԵՐ.)

I ԱՂԻՒՍԱԿ

Ապրանքների արտահանութիւնը Հայաստանից

Ապրանքների արտահանման ժամանակը / Ապրանքների տեսակները	Մարտից մինչև ապրիլը 1919 թ.			Մայիսից մինչև դեկտեմբ. 15-ը 1919 թ.			Դեկտ. 15-ից մինչև մարտի 1-ը 1920 թ.			ԸՆԴԱՄԵՆԸ	
	Քանակը	Փութի վեղրոյի արժէքը	Գումարը	Քանակը	Փութի վեղրոյի արժէքը	Գումարը	Քանակը	Փութի վեղրոյի արժէքը	Գումարը	Ընդ. քանակը	Ընդ. ԳՈՒՄԱՐԸ
	I ԿԱՐԳԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ (փթերով) *)										
1. Կաշեղէն	1880	351	650,600 պարտ.	4650	39	185000 հում.	5291	1554	8227000 պարտ.	11821	9062600
	II ԿԱՐԳԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ (վեղրօներով) **)										
2. Խմիչքներ (չիր)	768	625	480,380	40691	205	8331482	12913	501	6470753	54372	15282615

*) Մանօթութիւն՝ 1) դուշի, 2) եղան, 3) ոչխարի, 4) այծի, 5) հում և պատրաստի կաշի։
**) 1) կոնեակ, 2) կոնեակի սպիրտ, 3) օղի, 4) գինի և 5) քացախ։

	III ԿԱՐԳԻ (զանազան տեսակի) ԱՊՐԱՆՔՆԵՐ (փթերով)											
3.	Աղ	3000	30	90000	11330	30	339600	9777	122	1193790	24097	1623390
4.	Զոր խոտ	—	—	—	5000	20000	100000	23300	48	1140000	28300	1240000
5.	Գունդէ կտոր . . .	50	20	1000	1506	54	81600	—	—	—	1556	82600
6.	Սպիտ. թիթեղ. օղակ.	192	40	7680	—	—	—	—	—	—	192	7680
7.	Հաստ լարեր . . .	—	—	—	—	—	—	3000	270	750000	3000	750000
8.	Կօնսերվա	6	120	720	—	—	—	3	1200	3600	9	4320
	Ընդամենը III կարգի	3248	—	99400	17826	—	521200	36080	—	3087390	57154	3707990
	Ընդամենը I, II և III կ. ապր.	—	—	1230380	—	—	9037682	—	—	17785153	—	28053205
				% Ը			% Ը			% Ը		
I	Կաշեղէն			7,3			2,0			90,7		
II	Խմիչքներ (չիր)			3,1			54,5			42,4		
III	Զանազան ապրանք.			2,7			14,0			83,3		
	Ընդամենը % I II և III կարգի ապրանքները	—	—	4,4	—	—	32,3	—	—	63,3		

	II (վերջ.)										
2	Խմիչքներ (շիշերով)	21450	39,5	9771	18,0	14269	26,2	7213	13,2	1669	3,1	54372
	III (փուք)										
3	Աղ	1777	7,4	8500	35,3	3820	15,8	8000	33,2	2000	8,3	24097
4	Զոր Խոտ . . .	4900	17,3	—	—	5000	17,7	18400	65,0	—	—	28300
5	Գղնձի կաորներ .	523	33,6	—	—	507	32,6	—	—	526	33,8	1556
6	Սպիտ. թիթ. օղակ.	—	—	—	—	192	100	—	—	—	—	192
7	Հատատ լար . . .	—	—	—	—	—	—	3000	100	—	—	3000
8	Կոնսերվայ . . .	—	—	6	66,7	—	—	3	33,3	—	—	9
	Ընդամենը III կարգի	7200	12,6	8506	14,9	9519	16,7	29403	51,4	2526	4,4	57154
	Ընդամենը I, II և III կարգի	28856	23,4	19727	16,0	25668	20,8	40251	32,7	8845	7,1	123347

II ԱՂԻՒՍԱԿ

Արտահանուած ապրանքները ըստ փոխանակութեան եղանակի.

(1919 թ. մարտից մինչև 1920 թ. մարտ ամիսը)

Դասակարգ	Ապրանքների տեսակները / Ապրանքների փոխանակութեան եղանակը	Արտահանուած է նախքան Ռուսիոյ ներմուծուած հանգամանքը ապրանքի փոխարէն.		Արտահանուած է յետագայում ներմուծուած ապրանքների փոխարէն.		Արտահանուած է, բայց չէ ներմուծուած.		Արտահանուած է, բայց ժամանակին չստանալու պատճառով անցեալ է.		Անցեալ է, թէ ինչպէս է արտահանուած.		Բոլոր արտահանուած ապրանքները միասին.
		Քանակ	% ընդհան. քանակ	Քանակ	%-ը	Քանակ	%-ը	Քանակ	%-ը	Քանակ	%-ը	Քանակ
	I (փուք)											
1	Կաշեղէն . . .	206	1,7	1450	12,3	1880	15,9	3635	30,8	4650	39,3	11821

Այս II աղիւսակը վերաբերում է մեզ արդէն յայտնի արտահանուած ապրանքների փոխանակութեան եղանակին, առանց նրանց արժէքների։ Արտահանուած ապրանքները, որոնք քանակով նոյնն են ինչ յայտնի է I. աղիւսակից, փոխանակւել են հինգ եղանակով. 1. արտահանուած է՝ վաղօրօք ներմուծուած համարժէք ապրանքների փոխարէն, 2. արտահանուած է՝ յետագայում ներմուծուած համարժէք ապրանքների փոխարէն, 3. արտահանուած է, բայց չէ ներմուծուած. 4. արտահանուած է, բայց ժամանակին չը ստանալու պատճառով, անյայտ է ներմուծումը. 5. անյայտ է, թէ ինչ եղանակով է արտահանուած։ Ուրեմն հինգ տարբեր պայմաններով արտահանուած ապրանքներից յայտնի են մեզ առաջին երեք եղանակով կատարուած փոխանակութեան հետևանքները, 1. վաղօրօք ներմուծուածի փոխարէն արտահանուած ապրանքը կազմել է բոլոր եղանակներով արտահանուած ապրանքների ընդհանուր քանակի 23,4 տոկոս։ 2. յետագայում ներմուծուածի փոխարէն արտահանուած ապրանքը կազմել է ընդհանուրի 16,0 տոկոս. 3. վերջապէս արտահանուած, բայց նրա փոխարէն չներմուծուած ապրանքների տոկոսը հաւասար է 20,8 ի։ Այդ երեք կարգի արտահանութիւնների տոկոսական մասնակցութիւնը ընդհանուր արտահանութեան մէջ հաւասար է 60,2 ին, այսինքն կէսից աւելի է։ Մնացածը՝ 39,8 տոկոս արտահանութիւնը կատարւել է 4 րդ և 5 րդ եղանակով. վերջինը՝ անյայտ ձևով արտահանուած ապրանքը, բռնում է ամենահամեստ տեղը, ընդամենը 7,1 տոկոս։

Յաջորդ աղիւսակն արդէն վերաբերում է ապրանքների ներմուծման և արտահանութեան մասնաւոր ժարդկանց միջոցով։

(ՏԵՍ III ԱՂ. ՅԱՋՈՐԴ ԵՐ.)

III ԱՂԻՒ

Ներմուծում և արտահանութիւն

Նախօրօք ներմուծուած մասնաւոր մարդկանցից

Ամիս	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Քանակը	Փութի Արժէքը	Գումարը
Սեպտեմբեր	Բրինձ	940	499	469125
	Եղիպտացորեն . .	970	210	203358
	Թէյ	14	4340	60760
	Ընդամենը	1924	»	733243
Հոկտեմբեր	Գարի	1000	200	200000
	Նուռ	750	57	43000
	Եղիպտացորեն . .	575	120	69000
	Ընդամենը . . .	2325	—	312000
Նոյեմբեր	Եղիպտացորեն . .	1000	120	120000
	Մաղոն	134	4637	620400
	Իւղ	664	1160	730785
	Մոկաբոն	393	896	351450
	Ընդամենը	2190	—	1822635
Դեկտեմբեր	Շաքար	67	1097	73500
	Թէյ	18	47878	85820
	Գարի	300	120	36000
	Մխաթուս. արդիւնք	—	—	46207
	Ձուկ	4037	260	1049620
	Ընդամենը . . .	4422		1291147
Ընդամենը բոլոր չորս ամսուայ ընթացքում		10861	—	4159025

ՍԱԿ

1919 թ. չորս ամիսների

Թոյլատրուած է արտահանելու մասնաւոր մարդկանց

Ամիս	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Քանակը	Փութի Արժէքը	Գումարը
Սեպտեմբեր	Գինի	6700	70	469000
	»	2905	70	203350
	»	864	70	60350
	Ամաններ	10469	40	418760
	Ընդամենը	20968	—	1151460
Հոկտեմբեր	Գինի	1000	100	100000
	»	700	100	70000
	»	500	100	50000
	Ամաններ	2200	40	88000
	Սրկաթ	1050	147	155000
	Ընդամենը	5450	—	463000
Նոյեմբեր	Բացոթ	1000	40	40000
	Կոնեակ (68800 գր.)	1600	745	1032000
	Ամաններ	2600	40	104000
	Ընդամենը	5200	—	1176000
Դեկտեմբեր	Գինի	730	100	73000
	»	90	200	18000
	»	231	200	46200
	Կոնեակ (1677 գր.)	39	1290	50310
	» (16770 գր.)	390	1290	503100
	Ամաններ	1480	40	59200
	Ընդամենը . . .	2960		749810
Ընդամենը չորս ամսուայ ընթացքում		34548		3540270

Երրորդ աղիւսակի մէջ բերուած է 1919 թ. վերջին չորս կամ չորս ամիսների (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր) ներմուծումը ու արտահանութիւնը մասնաւոր մարդկանցից և մասնաւոր մարդկանց միջոցով։ Ներմուծուած են՝ բրինձ, եգիպտացորեն, թէյ, գարի, նաւթ, սապոն, իւղ, մակարոն, շաքար, ծխախոտային արդիւնքներ, ձուկ։ Ներմուծուած է չորս ամսայ ընթացքում ընդամենը 10861 փ. 4,159,025 ր. արժէքով։ Արտահանուած են, ընդհակառակը, գինի, ամանեղէն, երկաթ, քացախ և կոնեակ, ընդամենը 17799 փութ և 16749 վեդրո—3,540,270 ր. արժէքով։ Ներմուծուած է քանակով աւելի քիչ ապրանք բայց մեծ արժէքով։ Իսկ արտահանուած է քանակով աւելի շատ ապրանք՝ համեմատաբար նուազ արժէքով։

Ներմուծման մէջ արժէքի ամենամեծ բաժինը ընկնում է նոյեմբեր ամսայ վրա՝ 1,822,635 ր. կամ 43,8 տոկոս, ապա դեկտեմբերի վրա 1,291,147 ր. կամ 31,1 տոկոս, այնուհետև յաջորդում են սեպտեմբեր ամիսը—733,243 ր. կամ 17,6 տոկոս և հոկտեմբեր—312,000 ր. կամ 7,5 տոկոս։ Արտահանութեան մէջ ևս ամենամեծ արժէքով ապրանքներ արտահանուել են նոյեմբեր ամսին—1,176,000 ր. կամ 32,9 տոկոս ընդհանուր արտահանութեան մէջ, այնուհետև յաջորդում է սեպտեմբեր ամիսը — 1,151,460 ր. կամ 32,5 տոկոս, ապա դեկտեմբերը—749,810 ր. կամ 21,5 տոկոս, իսկ վերջում հոկտեմբերը — 468,000 ր. կամ 13,1 տոկոս։

Նայելով III աղիւսակին ըստ ապրանքների տեսակի, գտնում ենք, որ ներմուծման մէջ համեմատաբար ամենամեծ քանակ—4037 փ. կամ ընդհանուրի 37,2 տոկոս և ամենամեծ արժէքի—1,049,620 ր. կամ 25,3 տոկոս, ունեցել է ձուկը։ Երկրորդ տեղը բռնում է քանակի տեսակէտից—եգիպտացորենը—2,545 փ. կամ 23,4 տոկոս, իսկ արժէքի տեսակէտից—իւղը—730,785 ր. կամ 17,6 տոկոս։ Ամենից համեստ տեղը—թէյ քանակով և թէյ արժէքով, բռնում են թէյն ու շաքարը։ Ինչ վերաբերում է արտահանութեան, բնական էր սպասել, որ այնտեղ ոգելից խմիչքները առաջին տեղը պիտի բռնէին իրանց արժէքների մեծութեամբ։ Առաջին տեղը բռնում է կոնեակը իր 1,585,410 ր. արժէքով կամ 44,8 տոկոս—ամենամեծ տոկոսը ամբողջ աղիւսակում—այնուհետև յաջորդում է գինին, 1,039,900 ր. կամ 30,8 տոկոս։

Չորրորդ աղիւսակի մէջ կբերենք տեսակները 1920 թ. առաջին երկու ներմուծման և արտահանութեան ամիսների վերաբերեալ։

(ՏԵՍ IV ԱՂ. ՉԱՐՈՐԴ ԵՐ.)

IV ԱՂԻՒ

Ներմուծումն և արտահանութիւնը

Նախօրօք ներմուծուած մասնաւոր մարդկանցից

Ամիս	Ապրանքների տեսակները	Քանակը	Փութի արժէքը	Գումար
ՅՈՒՆՈՒԱՐ	Եգիպտացորեն	972	150	145800
	Կտորեղէն	455	140	63981
	Բևեռուկ	2425	29	309744
	Ընդամենը	3852	—	519525
ՓԵՏՐՎԱՐ	Սեղ	—	—	22400
	Ապակի	—	—	35000
	Դեղօրայք	—	—	148250
	Զուկ	582	174	101650
	Գրասենեակի իրեր	—	—	53770
	Զուկ	1422	250	355500
	«	162	250	40500
	Ցորեն	540	800	432000
	Գարի	260	600	156000
	Շաքարաւազ	800	2500	2000000
	Շաքար	200	3750	750000
	Ցորեն	500	500	250000
	Էլէքտրական լամպ.	495	319	157781
	Ընդամենը	4961	—	4502851
Ընդ. յուն. և փետր. ամիսների		8813	—	5022376

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՍԱԿ

1920 թ. երկու ամիսներին.

Թույլատրուած արտահանելու մասնաւոր մարդկանց

Ամիս	Ապրանքների տեսակները	Քանակը	Փութի արժէքը	Գումար
ՅՈՒՆՈՒԱՐ	Աղ	607	120	72840
	Գինի	283	226	63900
	Գոժդի կաշի	206	1500	309000
	Ընդամենը	1096	—	445740
ՓԵՏՐՎԱՐ	Գինի	343	298	102200
	Աղ	290	120	34800
	Ծղի	25	1000	25000
	Կոնեակ	140	1806	252840
	Աղ	685	150	102750
	«	195	120	23400
	Զոր խոտ	4900	60	294000
	Կոնեակ	955	2365	2258575
	Գինի	3000	300	900000
	Ընդամենը	10573	—	3993565
Ընդ. յուն. և փետր. ամիսների		11629	—	4439305

Հայկական ՍՍՀ Գրադարան
Гос. Библиотека
ZUU
им. А. Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3924-2002
(1549-2002)

IV-րդ աղիւսակի (տես «Ցառաջ» № 191) մէջ բերուած են 1920 թ. առայժմ միայն երկու—յունուար և փեբրուար—ամիսների վերաբերեալ տուեալները ներմուծման և արտահանութեան մասին, դարձեալ մասնաւոր մարդկանց միջոցով։ Այդ երկու ամիսներին ներմուծուած և արտահանուած են այնպիսի ապրանքներ, որոնք չկային վերջին (III) աղիւսակի մէջ՝ չորս ամսեայ փոխանակութեան ընթացքում. այսպէս օրինակ ներմուծման մէջ, երբեմն նոր ապրանքներ, լիշուած են՝ կատրեզէն, բենզուկ, տսեղ, ապակի, գ՝ղօբայք, դրասենեակի պիտոյքներ, էլէքտրակ. լամպեր։ Իսկ արտահանութեան մէջ յիշուած են նոր ապրանքներ՝ աղ, գոմշի կաշի, օղի, չոր խոտ։ Բնոր զ է այն հանգամանքը, որ 1920 թ. երկու ամսեայ ներմուծումն ու արտահանութիւնը էրենց արժէքով աւելի մեծ են, քան անցեալ տարեայ չորս ամիսներինը (սեպտ., հոկտ., նոյեմբ. և դեկտեմբ.)։ Յունուարի (519,525 ր.) և փեբրուարի (4502851 ր.) ներմուծումը՝ ընդամենը 5,022,376 ր. արժէքով, աւելի մեծ է քան չորս ամսեայ ներմուծումը 4,159,025 ր.։ Անդամ միայն փեբրուարի ներմուծումը, ինչպէս տեսնում ենք, աւելի է քան անցեալ տարեայ չորս ամսանք։ Նոյնն է և արտահանութիւնը. 1920 թ. յունուարի (445,740 ր.) և փեբրուարի (3,993,565) արտահանութիւնը եղել է 39305 ր. արժէքով, ասել է՝ աւելի (նոյն իսկ միայն փեբրուարինը), քան անցեալ տարեայ չորս ամսանք միասին վերցրած (3,540,270 ր.)։ Ի հաքէէ, դա ապացոյց չէ այն բանի, որ երկու ամսեայ ընթացքում համապատասխան չափերով ուժեղացել է մեր երկրի ապրանքափոխանակութիւնը. ներմուծուող և արտահանուող ապրանքների քանակը (փութերով կամ գոյներով), աւելի նուազ է եղել երկու ամսեայ ընթացքում։ Արժէքի բարձրացումը յունուարին և փեբրուարին ապացոյց է միայն ապրանքների գնների արագընթաց թանկացման թէ ներմուծուող և թէ արտահանուող ապրանքների նկատմամբ։

IV-րդ աղիւսակում, ներմուծման մէջ, իր դերակշռող արժէքով առաջին տեղն է բռնում շաքարն ու շաքարաւազը, որոնցից ներմուծուել են 1000 փ. 2,750,000 բուբլու արժէքով (անցեալ տարեայ չորս ամիսներին շաքար ամենից նուազ արժէքով էր ներմուծուել) կամ երկու ամիսների ընդհանուր ներմուծման 54,8 տոկոս։ Արտահանութեան մէջ արդէն առաջին տեղը բռնում է դարձեալ կոնեակը իր արժէքով 2.258,575 բուբլի կամ 51,0 տոկոս ընդհանուր արտահանուածքի մէջ։ Ներմուծման մէջ ամենանուազ արժէքով ներմուծուել է ասեղ և այլ նման պարագաներ 22,400 ր. կամ ընդհանուրի 0,4 տոկոս, իսկ արտահանութեան մէջ ամենանուազ արժէք ներկայացնում է օղին 25,000 ր. կամ մօտ 0,6 տոկոս։

V. ԱՂԻՒՍԱԿ

Ապրանքների ներմուծումը 1919 Ա. երկրորդ կիսամեակին

№ № ըստ տեսակների (*)	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԵՐԸ	Քանակը փութով	%	Արժէքը հազար մանեթով	%	Գերմանիայ.				Ֆինլանդիայ.				Ընդամենը	
						Ռուսաստանում գտնուող գերմանիայ. հպատակներ		Գերմանիայ.		Դանիայ.		Գերմանիայ.			
						Քանակը փութով	%	Քանակը փութով	%	Քանակը փութով	%	Քանակը փութով	%		
1	Դեղատնտ. բար. և պարէն	25698	1,16	378	0,04	27525	1,20	35177	1,60	2127000	96	2216378	
2	Գանազ. մթերք.	32305	41,0	1920	2,4	—	—	20593	26,2	23920	30,4	78738	
3	Թել և չոր մրդեղ.	28796	99,2	720	0,8	—	—	—	—	—	—	89516	
4	Գործ. ապրանք	18438	41,8	7474	16,0	—	7,8	7604	17,3	7100	16,1	44066	
5	Դարձ. արդիւնաբեր	177858	28,0	26480	4,2	—	—	377000	59,2	55,500	8,6	636297	
6	Ածուխ	7010	18,0	—	—	437	—	32070	82,0	—	—	39080	
7	Երկաթէ կտրքեր.	11168	47,7	1050	4,5	—	1,9	10762	45,9	—	—	23402	
8	Տարբեր. դրքեր.	2917	100	—	—	—	—	—	—	—	—	2917	
	Ընդամենը	364190	11,6	38481	1,8	31402	1,0	483207	15,4	2218020	70,7	3138300	

(*) տես ծան. յաջող էջում.

V-րդ ազիւսակը (տես «Ճառաջ» № 193) վերաբերում է ապրանքների ներմուծման 1919 թ. երկրորդ կիսամեակին։ Այս ազիւսակի առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ նրա մէջ չ՛իշուած են այն ազգիւրները կամ մարմինները, որոնցից կամ որոնց միջոցով ներմուծւել են մեր երկիրը ապրանքների ամենազանազան տեսակները։ Այդ ազգիւրները կամ, աւելի ճիշտ՝ միջնորդ մարմինները եղել են մասնաւոր մարդիկ, ինքնավարական և կօոպերատիւ հասատատութիւնները, օտար մխիթարները և այն պետական հիմնարկութիւնները (պարենաւորմանն-խարտարութիւն և այլն), որոնք ստացել են ապ անքներ ոչ ամերիկեան և ամերիկեան ծագումով։

Բոլոր ապրանքները վերածւած են ընդհանուր կաթեգորիաների, որոնցից ի-բաքանչիւրի բովանդակութեան մանրամասները բերւած են ծանոթութեան մէջ։ Ամբողջ ներմուծումը վերաբերում է 1919 թ. երկրորդ կիսամեակին, մինչև դեկտեմբերի 31-ը։ Ընդհանուր առմամբ վերցրած շատ հատեստ է, եթէ չասենք չնչին է քանակը այն ապրանքների, որոնք ներմուծւել են մեր երկիրը օտարերկրեայ միջոցների և քաղաքային ինքնավարութիւնների ու կօոպ. միջոցով։ Պէտք է աւելացնել, որ կօոպ. ներմուծածը շատ աւելին է, քան քաղ. վարչ.—որոնց մասին աւելները բերւած են մեր ազիւսակի մէջ միասին։

Ապրանքների ամենամեծ կաթեգորիան, որի քանակը հասնում է միլիոնների, կազմում է առաջին կատեգորիան, որի տակ ամփոփւած են հացահատիկներ, դիւղատնտ. այլ բոյսեր և, որ գլխաւորն է, ալիւր՝ ապրուստի ամենամեծ պարէնը։ Եւ այդ I-ին կատեգորիայի բոլոր ապրանքների բացարձակ մեծամասնութիւնը՝ 2,127,000 փութը կամ ընդհանուրի 96,0 տոկոսը ամերիկեան ծագում ունին, այսինքն ստացւած են Ամերիկայից։ Մնացած ապրանքների մէջ աչքի է ընկնում նաւթային արդիւնքների (V-րդ կատեգորիան) ներմուծումը մեր պետական հիմնարկութիւնների միջոցով, ընդամենը 377000 փ. կամ 59, 2 տոկոս։ Նոյն կատեգորիայի ապրանքների ընդհանուր քանակի։ Նոյն նաւթային արդիւնքներից 23,0 տոկոս կամ 177,858 փութը ներմուծւել է մասնաւոր մարդկանց միջոցով և 8,6 տոկոս կամ 55,000 փ. ամերիկացիների միջոցով։ Զանազան մթերքների ներմուծման մէջ (II կատեգ.) ամերիկացիների մասնակցութիւնը հաւասար է 30,4 տոկոսի (73,920 փ.)։ Միայն մի տեսակ ապրանք կայ, որի ներմուծումը տեղի է ունեցել գրեթէ ամբողջապէս մասնաւոր մարդկանց միջոցով. դա թաց և չոր մրգերի (III կատեգ.) ներմուծումն է՝ 88,796 փ. կամ 99,2 տոկոս։

Նայելով բոլոր ութ կատեգորիաների ընդհանուր աւելուններին՝ ըստ ներմուծւող մարմինների, գտնում ենք, որ առաջին տեղը՝ իր անպայման գերազանցութեամբ, բռնում է ամերիկեան ներմուծումը վեցամսեայ շրջանում, այն է 2,213,020 փ. կամ ընդհանուրի թւի. (3,130,300 փ.) 7,7 տոկոսը։ Երկրորդ տեղը բռնում է ոչ ամերիկեան ծագում ունեցող ապրանքների ներմուծումը պետական հիմնարկութիւնների միջոցով, այն է 483 207 փութ կամ ընդհանուրի 15,4 տոկոս։ Երրորդ տեղը մասնաւոր մարդկանց միջոցով եղած ներմուծումը՝ 364,190 փ. կամ 11,6 տոկոս։ Չորրորդ տեղը պատկանում է կօոպ-

Մանրամասնութիւն *)

1. Ցորեն, դարի, եգիպտացորեն, կորեկ, գարի, վարսակ, հնդկաձաւար և ալիւր։
2. Շաքար, թէյ, սուրճ, կակաւ, գինի, գինեղէն, չոր մրգեղէն, ծխախոտ, հանքային ջուրեր, կոնեակ, գինեղէն, ոգեղէն, գարեջուր և գարեջրեղէն։
3. Գազուն, թաց միրգ և բանջարեղէն։
4. Մանգաղ, թուրքուն, ծխամամուռ, հանքային ջուրեր, կոմբինեզոն, ոչ սուրճ, ոչ գարեջուր և գինեղէն տարբեր տարբեր։
5. Նաւթ, բենզին, իւղ (ՍԻՍԻՍԻՊ.), ասֆալտ, ոչ նաւթ և նաւթի ածանցեալներ։
6. Ածուխ քարէ և փայտէ։
7. Երկաթ, ատամ, սիրամարգ, երկաթէ գլխարկ, մեխ, գամ, գլանակ, մեխ և մանգաղ։
8. Տպագրական և գիրքագրական մելան։

պերտա. և քաղաք. ինքնավ. 36,814 փ. կամ 1,3 տոկոս. վերջապէս ամենահամեստ բաժինը ներմուծման մէջ ունեն տարբ միսիոնները՝ ընդամենը 13,402 փ. կամ 1,0 տոկոս։

Սակայն Հայաստանի ներմուծումը 1919 թ. չի սպառւում մինչ այստեղ յիշատակուած ապրանքներով։ Համաձայն նախկին պարենաւորման նախարարութեան հաշուեցոյցերի, ստացուած են յունիսի 17-ից մինչև դեկտեմբերի 31-ը հետևեալ ամերիկեան ապրանքները.

Ալիւր	1,406,250 փութ
Լոբի	123,250 »
Բրինձ	5325 »
Կորեկ	7950 »
Գարի	151,500 »
Շաքար	24,600 »
Կակաո	14,700 »
Թէյ	900 »
Սապոն	25,800 »
Խառնուած կաթ .	195,000
Հաճարի ալիւր .	56,250 »
Խոզի իւղ . . .	2700 »

Ընդամենը՝ 2,019,225

Համաձայն ֆինանսական նախարարութեան գործակալութեան հաղորդած տեղեկութիւնների՝ 1920 թ. փետրուար ամսին ներմուծուել են Հայաստան՝

Ալիւր	294,850	փութ
Մաղութ	55,000	»
Կաշի	1000	»
Հագուստեղէն . .	1600	—

Ընդամենը՝ 352,350

Համաձայն պարենաւորման նախարարութեան հաշուեցոյցերի, օգոստոսի 17-ից մինչև սոյն տարեայ փետրուարի 13-ը ներմուծուել են նոյն նախարարութեան հասցէով՝

Մաղութ	15,000	փութ
Նաւթ	11,250	»
Մեքենայի համար իւղ	9000	»
Բենզին	13,300	»

Ընդամենը՝ 48,550 փութ

Բացի դրանից ներմուծուած է նոյն ժամանակամիջոցում Ադրբէջանի միսսիայի միջոցով՝ ցորեն 876 փութ, գարի 1930 փ., կորեկ 1581 փութ, լոբի 378 փ., և ալիւր 4935 փութ. Ընդամենը՝ 10,250 փութ։

Նոյն պատւիրակների միջոցով ստացուել է՝ 18,153 փութ բրինձ, ամերիկեան պատւիրակների միջոցով՝ 2250 փ. հագուստեղէն և 4580 փ. դանազան իրեր (դլխաւորապէս ժամացոյցներ), ընդամենը 6830 փ.։

Ի մի խմբելով վերոյիշեալ բոլոր գումարները, ստանում ենք միայն կառելի թիւ՝ 2455358 փ. ապրանք որի մէջ ամերիկեան ծագում ունեցող ապրանքը աւելի խոշոր ժամ է կազմում, քան V-րդ աղիւսակում բերուած տուեալների մէջ. 2026055 փ. կամ ամբողջի 82.40 տոկոսը ներմուծուել են Հայաստան ամերիկացիների միջոցով։

Հաշուելով վերջին տուեալների հետ նաև III, IV և V աղիւսակների ներմուծման թիւերը, մենք ստանում ենք մօտ 9 ամսեայ (1919 թ. յունիսի մինչև 1920 թ. փետր. ամիսը) շրջանում այսպիսի մի խոշոր թիւ Հայաստան ներմուծուած ապրանքների քանակի վերաբերեալ՝ 5505382 փութ։ Ամերիկեան ապրանքների մասնակցութիւնը այդ 9 ամսեայ ներմուծման մէջ հաւասար է 4239075 փութի կամ ուղիղ 77 տոկոսի։ Ուստի Հայաստանի ներմուծման մէջ յիշեալ շրջանում միայն 33 տոկոս եղել են ոչ ամերիկեան ապրանքներ։

Ինչ է ներկայացնում այդ պատկառելի թիւ հանդէպ՝ ներմուծման վերաբերեալ, Հայաստանի արտահանութիւնը։ Շատ խղճուկ մի քանակ արտահանուած հում նիւթերի։ Հայաստանի արտահանութիւնը մի տարեայ ընթացքում (տես 2, 3 և 4 աղ.) հաւասար է ընդամենը 169524 փութի (360327 80 ռուբլու արժէքով)։

Եթէ դրա վրա աւելացնենք արտահանուած բամբակի (1919 թ. նոյեմբերից մինչև 1920 թ. փետրուար, ընդամենը չորս ամսում) քանակը՝ 49929 փութ, կստանանք ընդամենը 219453 փութ արտահանութիւն։ Ներմուծուած ապրանքների 5,505,382 փութի հանդէպ չբաւանալու չափ չնչին է մեր մաքսիմում 220,000—250,000 փ. ապրանքների արտահանութիւնը։ Ներմուծուած ապրանքների արժէքի մասին չունենք հշդրիտ տուեալներ։ Պարենաւորման մինիստրութեան հաշուապահական մատեանները հաղորդում են այդ մասին տուեալներ, իսկ ենթադրական գնահատութեան հիման վրա։ Սա վերոյիշեալ աղբիւրի Հայաստան ներմուծուած ապրանքների արժէքը հաւասար է 442,919,173 ռուբլու։ Հիմք ունինք պնդելու, որ սա չափազանց պակասաւոր մի գումար է, որ կարելի է ի նկատի ունենալ խիստ մեծ վերապահութեամբ։

Հայաստանի ներմուծումն ու արտահանութիւնը ուշադրութեան արժանի են և մի այլ կողմից՝ զուտ կուլտուր տնտեսական տեսակէտից։

Հայաստանը մի առաջին կարգի ագրարային—գիւղատնտեսական երկիր է, և բնական էր սպասել, որ մի այդպիսի երկիր կարող էր լինել՝ արտահանական շուկայ միայն գիւղատնտեսական բերքերի և հում նիւթերի (հացահատիկների, կուլտուրական բոյսերի, բանջարեղէնի, այգեգործութեան, անասնապահութեան և մեղուաբուծութեան արդիւնքների) համար և ներմուծական շուկայ բացառապէս կամ գերազանցապէս ինդուստրիական ապրանքների և առհասարակ կապիտալիստական արդիւնքների համար։ Երկու կարգի շուկաների այսպիսի մի վիճակ ունեցել է առաջ Հայաստանը. ինչպէս և ողջ Անդրկովկասը,—կանոնի նորմալ պայմաններում։

Այժմ, ըստ մեր բերած թուական տուեալների, տեսնում ենք, որ ագրարային Հայաստանը միանգամայն այլ պատկեր է ներկայացնում այստեղ շրջափուլ հարցի տեսակէտից։ Ագրարային Հայաստան ներմուծուած ապրանքների բացարձակ մեծամասնու-

Թիւնը կազմում են հացահատիկներ, պարէն և նրանց մէջ յատկապէս ալիւր, որոնց բոլորի քանակը 9 ամսւայ ներմուծման մէջ կազմում է 4,283,830 փութ, կամ ամբողջ ներմուծման (ինչպէս գիտենք՝ 5,505 332 փ. մօտ 78 տոկոս)։ Միայն ալիւրի ներմուծումը հաւասար է 3,416,120 փութի, կամ ընդհանուր ներմուծման 62 տոկոս, իսկ ալիւրի տոկոսը ներմուծուած հացահատիկների և այլ բոլորի ընդհանուր քանակի մէջ կազմում է 80 տոկոս։

Ահա այսքան խոշոր է ազգային Հայաստանի գիւղատնտեսական բերքերի ներմուծումը։ Անշուշտ, դրանով չի փոխւում Հայաստանի կուլտուրական բնոյթը։ Անընդմեջ տարիների բացառիկ կեանք ապրող, սովի ու աւերումների հոչակ սատարած Հայաստանը չէր կարող այլ ապրանքներ ներմուծել, բայց եթէ իր ֆիզիքականը պահպանելու համար ամենաանհրաժեշտ պարենը—հացը։ Հայաստանը պիտի հացահատիկներ և այլ պարէն ներմուծէր, արտահանելով իր տանմաններից խժիչքեղէն, կաշեղէն, աղ ու բամբակ, այսինքն ներմուծումն ու արտահանութիւնը ազգային արդիւնքներից էին բաղկացած՝ անյատանալու չափ չնչին տեղ տալով ոչ ազգային արդիւնքների ներմուծմանը։

Դիտողութիւններիս վերջում պէտք է նկատենք ցաւելով, որ չափազանց անփոյթ ու անկատար են ցուցակագրւում մեր ապրանքափոխանակութեան հաստատութեան մէջ ներմուծման և արտահանութեան վերաբերող տեսակներն ու անվանումները։ Այնտեղ չի պահպանւում ոչ ժամանակագրական կարգը, ոչ արժէքները՝ բոլոր ապրանքների և նիւթերի համար։ Օրինակ՝ մենք չունինք մեր ձեռքի տակ ոչնչան մեծ քանակով ներմուծուած ապրանքների արժէքը։ Այնուհետև ոչ մի յիշատակութիւն չկայ այն մասին, թէ ինչ երկրներ են արտահանում մեր նիւթերը ու ապրանքները և ինչ երկրներից ծագում ունին ներմուծուած ապրանքները։ Վերջինս պահպանում է միայն Ամերիկայի նկատմամբ։

Ապրանքափոխանակութեան կոմիսարիատ, ինչպէս և առհասարակ մեր նախարարութիւնների մէջ, թւական տեսակները ցուցակագրում են աւելի շուտ հաշուապահական ձևով, քան վիճակագրական եղանակով։ Ահա այդ ձևն է, որ պիտի փոխւի և մի ուրոյն սիստեմի վրա կառուցի մեր պետական վիճակագրութեան շէնքը իր բոլոր մասերով։

(Վերջ)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
именна, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

ա.ց. 1.
գ-ր 64-

ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Հայաստանի ապրանքափոխանակութիւնը 1919-1920 թ. ... 70 ր

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՍՆԻ

1. Հայաստանի գիւղատնտեսական վիճակագրութիւնը 1919 թ

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՏԵՒԵԼԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԻԻԼԵՏԻՆՆԵՐԸ

1. Պարէնի բաշխումը Հայաստանում 1919 թ.
2. Պաշտօնէութիւնը և բանուորութ. Հայաստանում 1919 թ
3. Հայկական օրբանոցները 1919—1920 թ.
4. Սրհեստանոցները Հայաստանում 1919 թ.
5. Գաղթականութիւնը Հայաստանում 1919 թ.
6. Կրթական-դպրոց. գործը Հայաստանում 1919—1920 թ
7. Բժշկա-սանիտարական վիճակը Հայաստանում 1919 թ.
8. Թիւրքահայ վիլայէթն. տնտեսական վիճակը 1909-191
9. Նշխաթուղու և փոստա-հեռագրական վիճակը 1919 թ.
10. Հայաստանի ֆինանսական վիճակը 1919 թ.
11. Ճանցագործութիւնը Հայաստանում 1919 թ.
(քրէական վիճակագրութիւն)

ԳԻՆՆ Է 70 Ր.

ՀՀ Ազգային գրադարան
NL0237854